

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2017 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
(ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2017/2018
ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՆՎՃԱՐ ՌԻՍՈՒՑՄԱՄԲ (ՆՊԱՍՏԻ ՁԵՎՈՎ ՌԻՍՄԱՆ ՎՃԱՐԻ
ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ) ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո Ր Ո Շ ՈՒ Մ է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների 2017/2018 ուսումնական տարվա անվճար ուսուցմամբ (նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) ընդունելության տեղերը՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը միջին մասնագիտական կրթական ծրագրով «Ոստիկանական գործ» մասնագիտության անվճար ուսուցմամբ (նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ) ընդունելության համար նախատեսված 65, ինչպես նաև նախնական մասնագիտական կրթական ծրագրով «Ոստիկանական գործ» մասնագիտության անվճար ուսուցմամբ (նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ) ընդունելության համար նախատեսված 120 տեղերից բացի սույն որոշմամբ հատկացվող լրացուցիչ 18 միջին մասնագիտական և 280 նախնական մասնագիտական կրթական ծրագրերով ընդունելության տեղերի ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

3. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝ մինչև 2017 թվականի հոկտեմբերի 30-ը՝

1) Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության կողմից ներկայացված հաշվարկների հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն՝ Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեում համապատասխան վերաբաշխում կատարելու վերաբերյալ,

2) Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ ներկայացնել առաջարկություն Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների 2018/2019 ուսումնական տարվա անվճար ուսուցմամբ ընդունելության տեղերի ըստ ոլորտների և մասնագիտությունների բաշխման վերաբերյալ՝ հիմք ընդունելով աշխատանքի շուկայի (առաջարկի և պահանջարկի, զբաղվածության և գործազրկության) առկա վիճակի վերլուծության արդյունքները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
(ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2017/2018 ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ
ՏԱՐՎԱ ԱՆՎՃԱՐ ՌԻՍՈՒՑՄԱՄԲ (ՆՊԱՍՏԻ ՁԵՎՈՎ ՌԻՍՄԱՆ ՎՃԱՐԻ
ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ) ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ**

NN ը/կ	Պետական լիազորված մարմնի և ոլորտի անվանումը	Տեղերի թիվը
1.	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն	
	Ոլորտ 2. Արվեստ	500
	Ոլորտ 4. Գործավարություն, վարչարարություն և իրավունք	110
	Ոլորտ 6. Տեղեկատվություն և հաղորդակցման տեխնոլոգիաներ (ՏՀՏ)	270
	Ոլորտ 7. Ճարտարագիտություն, արդյունաբերություն և շինարարություն	1215
	Ոլորտ 8. Գյուղատնտեսություն, անասնաբուժություն, անտառային տնտեսություն և ձկնային տնտեսություն	65
	Ոլորտ 9. Առողջապահություն և սոցիալական աշխատանք	25
	Ոլորտ 10. Սպասարկում (Ծառայություններ)	1642
	Պահուստային տեղեր	50
	ԸՆԴԱՄԵՆԸ	3877
2.	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն	
	Ոլորտ 10. Սպասարկում (Ծառայություններ)	400

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2017/2018 ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՆՎՃԱՐ ՌԻՍՈՒՑՄԱՄԲ (ՆՊԱՍՏԻ ՁԵՎՈՎ ՌԻՍՄԱՆ ՎՃԱՐԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ) ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ

N	Պետական լիազորված մարմինի և ոլորտի անվանումը	Տեղերի թիվ
1.	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն	
	Ոլորտ 01. Կրթություն	216
	Ոլորտ 02. Արվեստ	1018
	Ոլորտ 03. Սոցիալական գիտություններ, լրագրություն և տեղեկատվություն	47
	Ոլորտ 04. Գործարարություն, վարչարարություն և իրավունք	1936
	Ոլորտ 05. Բնական գիտություններ, մաթեմատիկա և վիճակագրություն	30
	Ոլորտ 06. Տեղեկատվություն և հաղորդակցման տեխնոլոգիաներ (ՏՀՏ)	862
	Ոլորտ 07. Ճարտարագիտություն, արդյունաբերություն և շինարարություն	775
	Ոլորտ 08. Գյուղատնտեսություն, անասնաբուժություն, անտառային տնտեսություն և ձկնային տնտեսություն	282
	Ոլորտ 09. Առողջապահություն և սոցիալական աշխատանք	1370
	Ոլորտ 10. Սպասարկում	582
	Պահուստային տեղեր	595
	ԸՆԴԱՄԵՆԸ	7713
2.	Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն	
	Ոլորտ 01. Կրթություն	2
	Ոլորտ 02. Արվեստ	89
	ԸՆԴԱՄԵՆԸ	91
3.	Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	
	Ոլորտ 01. Կրթություն	90
4.	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն	
	Ոլորտ 07. Ճարտարագիտություն, արդյունաբերություն և շինարարություն	5
	Ոլորտ 10. Սպասարկում	10
	ԸՆԴԱՄԵՆԸ	15
5.	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն	
	Ոլորտ 10. Սպասարկում	80
	Պահուստային	3
	ԸՆԴԱՄԵՆԸ	83

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների 2017/2018 ուսումնական տարվա անվճար ուսուցման (նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) ընդունելության տեղերը հաստատելու մասին» որոշման նախագծի ընդունման վերաբերյալ

1. Անհրաժեշտությունը

Որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջից, ինչպես նաև նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների 2017/2018 ուսումնական տարվա անվճար ուսուցման (նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ) ընդունելության տեղերի հաստատմամբ և պետական ուսումնական հաստատություններում ընդունելության գործընթացի կազմակերպմամբ:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Յուրաքանչյուր ուսումնական տարի ՀՀ կառավարության կողմից հաստատվում է տվյալ ուսումնական տարվա համար անվճար ուսուցման (նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) ընդունելության տեղերն՝ ըստ պետական կառավարման լիազորված մարմինների: Պետական կառավարման լիազորված մարմինը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության որոշումը, անվճար ուսուցման ընդունելության տեղերն ըստ մասնագիտությունների հատկացնում է իր ենթակայությամբ գործող ուսումնական հաստատություններին:

Որոշման նախագիծը մշակելիս հաշվի է առնվել նաև ««Կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2015 թ. ապրիլի 22-ի ՀՕ-20-Ն օրենքը, համաձայն որի 2017 թվականի հունիսի 1-ից Հայաստանի Հանրապետությունում տրասներկուամյա միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթությունը պարտադիր է լինելու մինչև սովորողի 19 տարին լրանալը, եթե այդ իրավունքը չի իրացվել ավելի վաղ: Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից մշակվել է նաև «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 28-ի N

1330-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը ներկայացվել է ՀՀ շահագրգիռ գերատեսչություններին և համապատասխան քննարկումից հետո սահմանված կարգով կներկայացվի ՀՀ կառավարության հաստատմանը:

Որոշման նախագծի հաստատումով կկարգավորվի 2017/2018 ուսումնական տարվանից սկսված մրցութային հիմունքով հիմնական կրթության հիմքով նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններ մինչև 19 տարին լրանալը ընդունված ուսանողների անվճար ուսուցումը:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

Սույն որոշման նախագծի ընդունման դեպքում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական համակարգում ներկայումս տարվող քաղաքականության փոփոխություն չի ակնկալվում:

4. Կարգավորման նպատակը և բնույթը

ՀՀ կառավարության կողմից անվճար ուսուցման (նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) ընդունելության տեղերի հատկացումը նպատակ ունի խրախուսել բարձր առաջադիմություն ունեցող դիմորդներին և ուսանողներին, ինչպես նաև պատրաստել մասնագետներ՝ ելնելով ՀՀ աշխատաշուկայի պահանջներից:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Սույն որոշման նախագծի մշակման գործընթացին ներգրավված են եղել ՀՀ շահագրգիռ գերատեսչությունները, գործատուներին ներկայացնող կազմակերպությունները, քաղաքապետարանը, մարզպետարանները և պետական ուսումնական հաստատությունները, որոնց հայտերի հիման վրա մշակվել է ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

6. Ակնկալվող արդյունքը

Սույն որոշման ընդունումը հնարավորություն կընձեռի ուսումնական հաստատություններում մրցութային կարգով անվճար ուսուցման (նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) տեղերում ընդունել բարձր առաջադիմություն ունեցող դիմորդներին և պատրաստել աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագետներ:

ՏԵՂԵԿԱԼՔ

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների 2017/2018 ուսումնական տարվա անվճար ուսուցման (նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) ընդունելության տեղերը հաստատելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ օրենքներում և իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության բացակայության մասին

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների 2017/2018 ուսումնական տարվա անվճար ուսուցման (նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) ընդունելության տեղերը հաստատելու մասին» որոշման նախագծի ընդունումն այլ օրենքներում և իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

ՏԵՂԵԿԱԼՔ

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների 2017/2018 ուսումնական տարվա անվճար ուսուցման (նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) ընդունելության տեղերը հաստատելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման բացակայության մասին

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների 2017/2018 ուսումնական տարվա անվճար ուսուցման (նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) ընդունելության տեղերը հաստատելու մասին» որոշման նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի առաջացնում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների 2017/2018 ուսումնական տարվա անվճար ուսուցման (նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) ընդունելության տեղերը հաստատելու մասին» որոշման նախագծի ընդունման վերաբերյալ շահագրգիռ գերատեսչություններից ստացված դիտողությունների և առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն 2017-04-04 թիվ 1.1/12.1/675-17 գրություն	Նախագծի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չունի		
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 2017-04-05 թիվ ԱԱ/ԺԱ-1-3/3672-17 գրություն	N 2 հավելվածի (ՀՀ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների 2017/2018 ուսումնական տարվա անվճար ուսուցմամբ (նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) ընդունելության տեղերը) «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն» բաժնում նվազեցնել 04 ոլորտում («Գործարարություն, վարչարարություն և իրավունք») ներառված մասնագիտությունների համար նախատեսվող տեղերը՝ աշխատաշուկայում այդ մասնագիտությունների գծով մեծ թվով գործազուրկների առկայության պատճառով (միայն Զբաղվածության պետական գործակալությունում (այսուհետ՝ Գործակալություն) հաշվառված	Ընդունվել է մասնակի:	<p>Որոշման նախագծում 150-ական տեղերով նվազեցվել են 04 ոլորտի՝ «Գործարարություն, վարչարարություն և իրավունք» տեղերի քանակը՝ «Տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությունների մասով, ինչպես նաև 09 ոլորտի՝ «Առողջապահություն և սոցիալական աշխատանք» տեղերը՝ «Առողջապահության» ոլորտի մասնագիտությունների մասով:</p> <p>Միաժամանակ հարկ եմ համարում նշել, որ որոշման նախագիծը մշակելիս հաշվի է առնվել նաև «Կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2015 թ. ապրիլի 22-ի ՀՕ-20-Ն օրենքը, համաձայն որի 2017 թվականի</p>

	<p>գործազուրկների թվաքանակում «Տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտություն ունեցողների թվաքանակը կազմում է 1549 անձ):</p>		<p>հունիսի 1-ից Հայաստանի Հանրապետությունում տասներկուամյա միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթությունը պարտադիր է լինելու մինչև սովորողի 19 տարին լրանալը, եթե այդ իրավունքը չի իրացվել ավելի վաղ:</p> <p>Ըստ ՀՀ աշխատաշուկայի ընդհանուր պահանջարկի՝ միջին մասնագիտական կադրեր գրեթե բոլոր մասնագիտությունների գծով շատ քիչ են անհրաժեշտ և ընդհանուր ՀՀ աշխատաշուկայում նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն կրթությամբ մասնագետների գերհագեցվածություն կա՝ աշխատատեղեր չլինելու պատճառով:</p> <p>Միջին մասնագիտական կրթական ծրագրով հիմնականում ընդունվում են սոցալապես անհապով ընտանիքի դիմորդներ և ուսումնառելով առողջապահական ոլորտի մասնագիտություն, նրանց ստացած գիտելիքները անհրաժեշտ է լինում ողջ կյանքի ընթացքում՝ առողջ ապրելու ինչպես նաև շրջապատին ճիշտ խորհուրդներ և առաջին բուժօգնություն ցուցաբերելու, առումով: Պետք է շեշտել ևս մեկ կարևոր հանգամանք՝ կապված Հայաստանի ու տարածաշրջանի զարգացումների, երկրի անվտանգության և առկա ռազմաքաղաքական վիճակի հետ:</p>
<p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն 2017-04-05 թիվ 1/05/434-17 գրություն</p>	<p>Նախագծի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չունի</p>		

<p>ՀՀ մշակույթի նախարարություն 2017-04-07 թիվ 01/2.1/1868-17 գրություն</p>	<p>N 2 հավելվածի 2-րդ կետում նշված «Ոլորտ 02. Արվեստ» տողի «29» թիվը փոխարինել «89» թվով:</p>	<p>Ընդունված է:</p>	<p>Որոշման նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>
<p>ՀՀ ոստիկանություն 2017-04-10 թիվ 24/823 գրություն</p>	<p>Նախագծի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չունի</p>		
<p>ՀՀ ֆինանսների նախարարություն 2017-04-10 թիվ 01/83-2/6242-17 գրություն</p>	<p>ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի ծրագրային ցուցանիշների հաշվարկների հիմքում միջին մասնագիտական կրթական ծրագրով ՀՀ կրթության և գիտության նախարարությանը նախատեսվել է 7773 ընդունելության անվճար տեղ՝ Նախագծով ներկայացված 8173-ի դիմաց կամ Նախագծով ավել է ներկայացվել 400 ընդունելության անվճար տեղ: Նկատի ունենալով, որ նշված ընդունելության անվճար տեղերի ավելացումը կառաջացնի ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ծախսերի կատարման անհրաժեշտություն՝ անհրաժեշտ է Նախագծում պակասեցնել նշված 400 տեղը:</p>	<p>Ընդունված է:</p>	<p>Որոշման նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>
	<p>Ինչ վերաբերում է Նախագծի 2-րդ կետով ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանությանը լրացուցիչ 18 միջին մասնագիտական և 280 նախնական մասնագիտական կրթական ծրագրերով ընդունելության տեղերի նախատեսմանը, ապա դրանց գծով լրացուցիչ ծախսը 2018 թվականին կկազմի շուրջ 147,7 մլն դրամ («Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-215-Ն ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ Ոստիկանության ուսումնական հաստատությունում պետական պատվերի շրջանակներում կրթություն ստացող սովորողներն ուսման ողջ ժամանակահատվածում ստանում են վարձատրություն՝ ՀՀ-ում նվազագույն ամսական աշխատավարձի չափով): Ուստի, չենք առարկում վերոնշյալ լրացուցիչ տեղերի նախատեսմանը, պայմանով, որ դրանց գծով անհրաժեշտ ծախսերը 2018 թվականին նույնպես կկատարվեն ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանությանը նախատեսվող ընդհանուր հատկացումների շրջանակներում:</p>		<p>Որոշման նախագծի 2-րդ կետով սահմանում է, որ 18 միջին մասնագիտական և 280 նախնական մասնագիտական կրթական ծրագրերով ընդունելության տեղերի ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:</p>

<p>ՀՀ առողջապահության նախարարություն 2017-04-10 թիվ ԼԱ/05/5296-17 գրություն</p>	<p>Հայաստանի Հանրապետությունում առկա է բժշկական միջին մասնագիտական կրթության աշխատուժի զգալի ավելցուկ: Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պետական գործակալության տվյալների, ներկայումս Հայաստանի Հանրապետությունում առկա է 2728 գրանցված գործազուրկ բուժքույր, մանկաբարձուհի և ատամնատեխնիկ: Փորձագետների կարծիքով վերջիններիս իրական թիվը մոտ 8-9 հազար է: Միևնույն ժամանակ տեղեկացնում են, որ ՀՀ ԱՆ աշխատակազմում վարվող առողջապահության համակարգի թափուր աշխատատեղերի տեղեկատվական բազայում առկա է միջին-մասնագիտական կրթությամբ ընդամենը 12 թափուր հաստիք, որոնք հիմնականում սպեցիֆիկ և ոչ հրապուրիչ աշխատատեղեր են հոգեբուժարաններում և դատաբժշկական ծառայությունում:</p> <p>Բժշկական միջին-մասնագիտական կրթությամբ աշխատատեղերի բացակայության մասին ՀՀ առողջապահության նախարարությունը յուրաքանչյուր տարի, այդ թվում և այս տարի, տեղեկացրել է Ձեզ: Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկում են ներկայացված նախագծում կտրուկ կրճատել 2017/2018 ուսումնական տարվա անվճար ուսուցմամբ (նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) ընդունելության տեղերը առողջապահության բնագավառի մասնագիտություններով, հասցնելով այն հնարավոր նվազագույնի:</p> <p>Ինչպես և նախորդ տարիներին, առաջարկում ենք ազատված բյուջետային միջոցները հատկացնել 2017/2018 ուսումնական տարվա անվճար ուսուցմամբ (նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) բժշկական հետբուհական կրթական ծրագրերով (նպատակային կլինիկական օրդինատուրա) բժիշկ-մասնագետներ պատրաստելուն:</p>	<p>Ընդունված է մասնակի:</p>	<p>Որոշման նախագծում 150 տեղով նվազեցվել է 09 ոլորտի՝ «Առողջապահություն և սոցիալական աշխատանք» տեղերը՝ «Առողջապահության» ոլորտի մասնագիտությունների մասով:</p> <p>Միաժամանակ հարկ են համարում նշել, որ որոշման նախագիծը մշակելիս հաշվի է առնվել նաև «Կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2015 թ. ապրիլի 22-ի ՀՕ-20-Ն օրենքը, համաձայն որի 2017 թվականի հունիսի 1-ից Հայաստանի Հանրապետությունում տասներկուամյա միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթությունը պարտադիր է լինելու մինչև սովորողի 19 տարին լրանալը, եթե այդ իրավունքը չի իրացվել ավելի վաղ:</p> <p>Ըստ ՀՀ աշխատաշուկայի ընդհանուր պահանջարկի՝ միջին մասնագիտական կադրեր գրեթե բոլոր մասնագիտությունների գծով շատ քիչ են անհրաժեշտ և ընդհանուր ՀՀ աշխատաշուկայում նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն կրթությամբ մասնագետների գերհագեցվածություն կա՝ աշխատատեղեր չլինելու պատճառով:</p> <p>Միջին մասնագիտական կրթական ծրագրով հիմնականում ընդունվում են սոցալապես անհապով ընտանիքի դիմորդներ և ուսումնառելով առողջապահական ոլորտի մասնագիտություն, նրանց ստացած գիտելիքները անհրաժեշտ է լինում ողջ կյանքի ընթացքում՝ առողջ ապրելու,</p>
---	---	-----------------------------	---

			շրջապատին ճիշտ խորհուրդներ և առաջին բուժօգնություն ցուցաբերելու առումով, ինչպես նաև պետք է հաշվի առնել նաև ևս մեկ կարևոր հանգամանք՝ կապված Հայաստանի ու տարածաշրջանի զարգացումներին, երկրի անվտանգությանը և առկա ռազմաքաղաքական վիճակը:
Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք	Նախագծի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեն ստացվել:		
ՀՀ արդարադատության նախարարության 2017-05-16 թիվ 01/14/7992-17 գրություն	Նախագծի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեն ստացվել:		
ՀՀ ֆինանսների նախարարության 034/22469-17 2017-06-12 գրություն	Նկատի ունենալով ՀՀ կրթության և գիտության նախարարության պարզաբանումը, որ միջին մասնագիտական կրթության գծով ՀՀ մշակույթի նախարարությանը նախատեսված ընդունելության անվճար տեղերի 60-ով ավելացման արդյունքում ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն չի առաջանա և այն կապահովվի ՀՀ կրթության և գիտության նախարարությանը նախատեսված ֆինանսական միջոցներից՝ ՀՀ պետական բյուջեում ծախսերի վերաբաշխում կատարելու միջոցով, հայտնում ենք, որ վերոհիշյալ Նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունենք:		